ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԹԻՎ 3.

2018 թվականի ապրիլի 26-ին տեղի ունեցավ 22 Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11բ դասարանի ծնողական ժողովը:
Ժողովին ներկա էին բոլոր ծնողներն ու աշակերտները:
Ժողովը վարում էր դասղեկ Մարինե Քոչարյանը:
Ներկա էին նաև քիմիայի, մաթեմատիկայի, հայոց լեզվի ուսուցչուհիներ Լուիզա Աղաքարյանը, Վարդիթեր Քոչարյանը և Գոհար Ղազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1.
ա) ուսման առաջադիմությունը
բ) դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակը
գ) համազգեստը և նրա պահպանումը
ե) դասարանի սանիտարական վիճակը և գույքի պահպանումը՝
զ) հաճախումների արդյունքները

2. Ընթացիկ հարցեր (կարգապահություն,վարք և այլն):

Ա. Լսեցին՝

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ դասղեկ Մարինե Քոչարյանը: Նա ամփոփ ներկայացրեց դասարանի աշակերտների դասապրոցեսին մասնակցությունը և պատրաստվածությունը: Հատկապես բոլորի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ բարձր դասարաններում շատ են բացակայության դեպքերը,որոնք կարող են լուրջ հետևանքներ ունենալ:Ծնողներին տեղյակ պահվեց իրենց երեխաների բացակայությունների մասին: Ծանոթացրեց սովորողների՝հաջորդ դասարան փոխադրվելու կարգին: Տեղեկացրեց, որ կազմվելու է մայիսի 15-ի դրությամբ աշակերտների բացակայությունների մասին տեղեկանք: Ուստի հորդորեց՝վերջ դնել անհարգելի բացակայություններին,որի հետևանքով սովորողը լուրջ գիտելիքների բացթողում է ունենում:
Դասղեկը հետևողական է եղել հերթապահության, հաճախումների, դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակի ստուգման, համազգեստի, նրա պահպանման, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանման հարցում: Պատժվել են նրանք, ովքեր կատարել են կարգապահական շեղումներ, փորձել են խանգարել կամ լքել դասերը:Անմիջապես տեղեկացվել է ծնողներին ամեն ինչի մասին և դասղեկ-ծնող համատեղ ջանքերով փորձել են հարթել ծագած խնդիրները:
Զեկուցողը նշեց նաև ուսման մեջ չառաջադիմող աշակերտների անունները, նրանց վարքի դրսևորման, հերթապահության կատարման,տվեց դասարանի ծնողական և աշակերտական խորհուրդների աշխատանքի համառոտ ամփոփագիրը:

Որոշեցին՝

- Ուժեղացնել դասարանի աշակերտների նկատմամբ հսկողությունը սովորելու հարցում ծնողների կողմից և ամեն գործում օգնել դասղեկին:
- Ավելի հաճախ լինել դպրոցում, կատարել դասալսումներ՝ աշակերտների կարգապահությունը և վարքը բարձր մակարդակի վրա դնելու համար:

Լսեցին նաև ներկա գտնվող ուսուցիչների և ծնողների ելույթները.

1. Ծնողխորհրդի նախագահ Լուսինե Հովհաննիսյանը առաջարկեց ուժեղացնել դասարանում կատարվող բոլոր աշխատանքների հսկողությունը ծնողների կողմից և ամեն հարցում հենարան լինել դասղեկին:

Որոշեցին՝
Ա. Հաճախակի լինել դպրոցում, կատարել դասալսումներ, հետևել օգնել աշակերտներին ամեն հարցում:
Բ. Ստուգել երեխայի ամենօրյա դասապատրաստումները (տնային և գործնական աշխատանքների կատարում և այլն):
Քննարկվեցին նաև ընթացիկ հարցեր՝ կապված աշակերտների կուլտուրական մակարդակի բարձրացման, գիտելիքների զարգացման և այլ խնդիրների լուծման հետ (կոլեկտիվ կինոդիտում, այցելություն թանգարաններ ու թատրոններ, ներդպրոցական միջոցառումներ և այլն):
Բոլորն էլ հավաստեցին, որ սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում մեծ է ծնողների դերը երեխային ուսման մեջ աջակցելու և դպրոցից դուրս նրա օրվա մնացած ժամերի զբաղվածությունը ճիշտ կազմակեր-պելու հարցում, որովհետև նրանց ամենօրյա անմիջական հսկողությունից և ծնողական պարտքի զգացումից է կախված աշակերտի ուսման նկատմամբ պա-տասխանատվությունը, օրվա ռեժիմի ճիշտ կարգավորելը: Պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության և ուսման հիմնախնդիրների լուծման հարցում:
Դասղեկը հորդորեց ծնողներին ճիշտ կազմակերպել երեխաների և՛ ազատ ժամանակի տնօրինումը, և՛ դասապատրաստման գործը:
Կարևոր է նաև երեխաների հաճախակի այցելությունը մշակութային օջախներ՝ կրթական մակարդակը բարձրացնելու և նոր մարդ ձևավորելու ընթացքը ճիշտ հիմքերի վրա դնելու համար:

Ժողովի նախագահ՝ ---- (Լ. Հովհաննիսյան)
Քարտուղար՝ ---- (Թ. Ավետիսյան)